



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » մարտի 2015 թ.

N 31

ք. Ստեփանակերտ

Վ.Վ.Հովսեփյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 28 առ 20.10.2014թ. հրամանով, ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 08 առ 17.10.2014թ.), ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազության դատախազ, 1-ին դասի խորհրդական Վ.Վ.Հովսեփյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 35 առ 10.03.2015թ. հրամանով Վ.Վ.Հովսեփյանը նշանակվել է ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ, 1-ին դասի խորհրդական Վաղին Վյաչեսլավի Հովսեփյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղըջդատախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան